ՀԱՍՏԱՏՈՒՄ ԵՄ

Տնօրեն՝ Ս.Դեղոյան «31» օգոստոս 2022 թ.

Կ.Տ.

ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅԱՆ ԴԱՍԱՐԱՆԻ ՂԵԿԱՎԱՐԻ ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ՏԱՐԵԿԱՆ ԾՐԱԳԻՐ

ք. Երևան	Մալաթիա-Սեբաստիա
մարզ	համայնք

հ. 179 հիմնական դպրոց 4-րդ բ

ուսումնական հաստատության անվանումը, դասարանը

Խաչատրյան Նունե Սմբատ

դասարանի ղեկավարի անունը, հայրանունը, ազգանունը

«2022-2023» ուսումնական տարի

ԿՐԹԱԿԱՆ-ԴԱՍՏԻԱՐԱԿՉԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ՀԻՄՆԱԿԱՆ ՈՒՂՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

1. ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ *(դասարանի ընդհանուր բնութագիրը)* 4_դդ դասարանում սովորում են 32 աշակերտ՝ 19 տղա, 13 աղջիկ: Աշակերտական կոլեկտիվը կազմավորված է: Դասարանում տիրում է առողջ բարոյահոգեբանական մթնոլորտ: Կան տարբեր կարողություններով աշակերտներ: Սիրով հաճախում են դպրոց, կատարում ուսուցչի հանձնարարությունները:

2. ՈՒՍՈՒՄՆԱԴԱՍՏԻԱՐԱԿՉԱԿԱՆ ՆԱԽԱՏԵՍՎՈՂ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐՆ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՏԱՐՎԱ ԸՆԹԱՑՔՈՒՄ

ՈՒսուցանել ազատ և անկաշկանդ մտածելու կարողություն: Իրականացնել անձի համակողմանի և ներդաշնակ դաստիարակություն՝ հաշվի առնելով տարիքային առանձնահատկությունները: Օգնել աշակերտներին ստացած գիտելիքները կիրառել գործնականում: Կարևորել գեղագիտական արժեքները, բարոյական չափանիշները, համամարդկային արժեքները: Տեղեկացնել իրավունքների և պարտականությունների մասին և հետևողական լինել դրանց իրականացման գործում: Սովորեցնել գնահատել բարությունը, հանդուրժողականությունը, ազգային արժանապատվությունը: Կազմակերպել գրքի, բանակի, մայրության, լեզվի օրվան նվիրված զրույցներ, ապահովել աշակերտների մասնակցությունը խմբային, ուսումնական միջոցառումներին:

3. ՀԱՅԵՑԻ ԴԱՍՏԻԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ

3.1 Հոգևոր դաստիարակություն: Կարևորելով հոգևոր դաստիարակության ձևավորումը՝ գիտակցել աշակերտին քրիստոնյա մեծացնելու առանձնահատկությունները: Ձևավորել, զարգացնել ճանաչողական ակտիվությունը, հարգալից վերաբերմունք լեզվի, մշակույթի նկատմամբ, նպաստել ինքնակատարելագործման ներքին պահանջի առաջացմանը:

3.2 Գեղագիտական դաստիարակություն : Կարևորագույն խնդիրն է երեխային սովորեցնել շրջակա աշխարհի մեջ տեսնելու հոգևոր հարստություն, բարություն և ձևավորել գեղեցիկը նկատելու կարողություն: Զարգացնել նկարչական, երաժշտական, պարային կարողությունները:

3.3 Ռազմա-հայրենասիրական դաստիարակություն: Դաստիարակել սեր, անշահախնդիր վերաբերմունք դեպի հայրենիքը, հարգանք ՀՀ պետական խորհրդանիշների նկատմամբ: Սովորեցնել լինել հայրենասեր, կարևորել ազգային հիմնախնդիրների լուծման գործում իր մասնակցությունը:

3.4 Ֆիզիկական դաստիարակություն: Կարևորել հետևյալ խնդիրները՝ աշակերտների ներդաշնակ ֆիզիկական զարգացում, աշակերտների մեջ բարձր բարոյական որակների զարգացում, շարժողական հատկությունների մշակում:

3.5 Աշխատանքային դաստիարակություն: Դաստիարակել աշխատասիրություն, նպատակասլացություն, կարևորել ուրիշի և սեփական աշխատանքը, ինքնահաստատվել: Պետք է համագործակցել մեծահասակների հետ: Պլանավորել գործողություններ, ձեռք բերել կյանքի հմտություններ:

3.6 Բնապահպանական դաստիարակություն: Ծանոթացնել սենյակային բույսերի աճեցմանն ու խնամքին, կազմակերպել ծառատունկ դպրոցի բակում: Դաստիարակել ուշադիր հոգատար վերաբերմունք շրջապատող բնությանը, կարողանալ նկատել և կանխել շրջապատում տեղի ունեցող խախտումները:

4. ԴՊՐՈՑ-ԸՆՏԱՆԻՔ ԿԱՊԸ : Աշակերտի դաստիարակությունը արդյունավետ կիրականացվի, եթե ամուր լինի դպրոց-ընտանիք կապը: Օգնել ծնողին, որ նա մտածի երեխայի տեսանկյունից, օգնել աշակերտին հարգել ծնողներին և ճիշտ գիտակցել իր տեղն ու դերը տանը և դպրոցում: Ծնողներին ներգրավել որոշումներ կայացնելու գործում:

ՈՒՍՈՒՄՆԱԴԱՍՏԻԱՐԱԿՉԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ՀԻՄՆԱԿԱՆ ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆԸ

Ուսումնական շաբաթներ	Ուսումնադաստիարակչական աշխատանքների բովանդակությունը	Կատարման ժամկետը	Կատարողներ
I շաբաթ	I կիսամյակ Աշակերտներին ներկայացնել իրենց իրավունքները և պարտականությունները	09.09.2022	դասվար
II շաբաթ	Զրուցել ՀՀ անկախության օրվա մասին, ձևավորել պետական մտածելակերպ	16.09.2022	դասվար ՆԶՊ ուսուցիչ
III շաբաթ	Խոսել ընկերասիրության մասին	23.09.2022	դասվար
IV շաբաթ	Քննարկել բնության պահպանության հիմնախնդիրները	30.09.2022	դասվար
V շաբաթ	Զրուցել արվեստի տեսակների մասին	7.10.2022	դասվար
V շաբաթ	Ներկայացնել Կոմիտասի և այլ դասական երաժշիտիշտների ստեղծագործությունները	14.10.2022	դասվար Ա.Նիգոյան
VII շաբաթ	Խոսել Հայաստանում աշնան գեղեցիկ տեսարանների մասին, ցուցադրել նկարներ	21.10.2022	դասվար Մ.Ավջյան
VIII շաբաթ	«Ինչպես օգնել մարդկանց»թեմայի շուրջ կատարել խմբային աշխատանք	4.11.2022	դասվար
IX շաբաթ	Զրուցել օրվա ռեժիմի խելամիտ կազմակերպման մասին	11.11.2022	դասվար
X շաբաթ	Ներկայացնել կարգապահական, վարվեցողության կանոնների պահպանման կարևորությունը	18.11.2022	դասվար
XI շաբաթ	Զրուցել պատասխանատվության, ազնվության և այլ մարդկային բարձր որակների մասին	25.11.2022	դասվար
XII շաբաթ	Խոսել տարբեր միջավայրերում ճիշտ պահվածք ցուցաբերելու մասին	2.12.2022	դասվար
XIII շաբաթ	Իրազեկել բնության աղետների ժամանակ ճիշտ կողմնորոշվելու կանոնները	9.12.2022	դասվար
XIV շաբաթ	Ներկայացնել ձմռանը տեղի ունեցող բնական երևույթները	16.12.2022	դասվար
XV շաբաթ	Ծանոթացնել ազգային տոներին, հատկապես զրուցել Ամանորի առանձնահատկությունների մասին	23.12.2022	դասվար

ՈՒՍՈՒՄՆԱԴԱՍՏԻԱՐԱԿՉԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ՀԻՄՆԱԿԱՆ ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆԸ

Ուսումնական շաբաթներ	Ուսումնադաստիարակչական աշխատանքների բովանդակությունը	Կատարման ժամկետը	Կատարողներ
I շաբաթ	I I կիսամյակ Վերհիշել կարգապահական կանոնները և դրանց պահպանման կարևորությունը	13.01.2023	դասվար
II շաբաթ	Խոսել հայոց բանակի ստեղծման և հայ զինվորների հերոսական պայքարի մասին	20.01.2023	դասվար
III շաբաթ	Ներկայացնել սուր կենցաղային իրադրություններն ու դրանց ազդեցությունը	27.01.2023	դասվար ՆԶՊ ուսուցիչ
IV շաբաթ	«Իմ նպատակը» թեմայի քննարկում	3.02.2023	դասվար
V շաբաթ	Ներկայացնել ճանապարհային երթևեկության կանոնները	10.02.2023	դասվար
VI շաբաթ	«Գիրքը իմ բարեկամն է» թեմայի քննարկում	17.02.2023	դասվար
VII շաբաթ	Բացահայտել ճանապարհային հետիոտնի վարքի և հիմնական կանոնները	24.02.2023	դասվար
VIII շաբաթ	Ներկայացնել քաղաքավարության կանոնները, միմյանց լսելու կարողության ամրապնդում	3.03.2023	դասվար
IX շաբաթ	Խոսել Մարտի 8-ի՝ կանանց միջազգային օրվա մասին	10.03.2023	դասվար
X շաբաթ	Ծանոթացնել մասնագիտությունների հետ	17.03.2023	դասվար
XI շաբաթ	Խոսել աշակերտների տարրական գործողությունների մասին կենցաղային վտանգվոր իրադրությունների ժամանակ	24.03.2023	դասվար ՆԶՊ ուսուցիչ
XII շաբաթ	Ներկայացնել Ապրիլի 7-ի ՝ մայրության և գեղեցկության տոնի կարևորության մասին	7.04.2023	դասվար
XIII շաբաթ	Զրուցել ավանդույթների մասին	14.04.2023	դասվար
XIV շաբաթ	Ներկայացնել ԱԻ-ի մասին ազդարարումը և գործողությունների հաջորդականությունը	21.04.2023	դասվար ՆԶՊ ուսուցիչ
XV շաբաթ	«Ճանաչիր քո հայրենիքը» թեմայի քննարկում, զրույցներ վարել ՀՀ քաղաքների և գյուղերի մասին	28.04.2023	դասվար
XVI շաբաթ	Խոսել Մայիսի 1-ի՝ աշխատավորների միջազգային օրվա մասին, սերմանել աշխատասիրություն և նպատակասլացություն	5.05.2023	դասվար
XVI I շաբաթ	Պարզել երեխաների կարծիքը կենդանաբանական այգու մասին	12.05.2023	դասվար
XVIII շաբաթ	Ներկայացնել կենցաղային իրադրություններում ստացած վնասվածքներից ինքնօգնության և փոխօգնության ցուցաբերման մասին	19.05.2023	դասվար ՆԶՊ ուսուցիչ
XIX շաբաթ	Խոսել Մայիսի 28-ի՝ Հայաստանի առաջին Հանրապետության անկախության օրվա մասին	26.09.2023	դասվար